ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾԸ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ.

Հայաստանում կրկին սկսուեց դժբախտ տաճկահայերի կոտորածը, կրկին մեր մայրերի, քոյրերի ու եղբայրների աղաղակն երկինք է բարձրանում և այս անգամ տաճիկ կառավարութեան վերջին դատաստանն են հայցում Տիրոջից։ Զանազան տեղերից դիմում են Ազգիս վշտացեալ Վեհափառ Կաթուղիկոսին, խնդրելով շուտափոյթ օգնութիւն զսպել տալու խորտակուող տաճիկ կառավարութեան գազանային հակումները և վերջ տալ հաղարաւոր անմեղների արիւնը թափելու։

Վեհափառ Կաթուղիկոսն իսկոյն արձագանք տուեց այդ դիմումներին և իւր կողմից հեռագրական պաշտօնական դիմումներ արաւ Կովկասի փոխարքայ կոմս Վարանցով-Դաշկովին, Ռուսաց արտաքին գործոց նախարար Սազոնովին, Իտալիայի թագաւոր Վիկտոր Էմմանուէլ III-ին, Անգլիայի թագաւոր Գէորգ V-ին, Ֆրանսիայի հանրապետութեան նախագահ Պուանկարէին, Ամերիկայի Միացեալ նահանգների հանրապետութեան նախագահ Վիլսոնին։ Միւս կողմից միաժամանակ հեռագրում է իւր լիազօր Պօղոս փաշայ Նուբարին, առաջարկելով մեկնել Եւրոպա և անձամբ կարևոր անձանց հետ տեսնուելով իւր կողմից պաշտպանութիւն խնդրել Թրքահայ դժբախտ զաւակների համար։ Ահա այդ դիմումներն, որ բերում ենք այստեղ։

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ

I

Էջմիածին, 7 ապրիլի

Նորին Կայսերական Մեծութեան Տ. Փոխարքայ կոմս Իլլարիոն Իվանովիչ Վարանցով-Դաշկովին:

Խորապէս ճնշուած Տաճկաստանի խաղաղ հայերի կոտորածի սոսկալի լուրերով, որի մասին զեկուցել են Ձերդ